

Լ. Մելիքսեբ-Բեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ VII ԴԱՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

VI—VII դ. դ. հայերեն, ինչպես և զուգահեռ հայերեն-հունարեն արձանագրությունների հայտարարումն Ավանում (տես՝ «Սովետական Հայաստան», 1941 թ., №№ 112, 121, «Коммунист» № 120) առիթ է տալիս մեզ հրապարակ հանելու մի քանի՝ դեռևս անհայտ՝ հայերեն, մասամբ և հունարեն արձանագրություններ, որ մեզ վիճակվեց ընդօրինակել Հայաստանում 1924 թ. մեր կատարած ճանապարհորդության միջոցին առնվազն չորս կետում (Ավան, Մաստարա, Ադիաման, Օձուն-Ուզունլար):

Մեր ընդօրինակած արձանագրությունները բովանդակությամբ ընդարձակ չլինելով հանդերձ՝ մի-մի բառ կամ անուն պարունակող հուշարձաններ են լուրջ կամ ֆրազմենտներ միայն: Սակայն, ցարդ հայտարարված սակավաթիվ (13-ի չափ) հնագույն (այսպես կոչված «Մեսրոպյան»), ասել է՝ VII դարու, հայերեն արձանագրությունների շարքում սրանք ևս, անկասկած, իրենց տեղն են գտնելու:

1. Ավան: Այստեղ էր գտնվում երբեմն (VI—VII դ. դ.) Բյուզանդահայքի հայ կաթողիկոսների աթոռանիստը, ինչպես վկայում է X դ. հայ պատմիչ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին (թր., 1912, էջ 72—73), մինչդեռ Պարսկահայքի կաթողիկոսը, ըստ նույն պատմիչի, «ի Դուին քաղաքի բնակէր... վասն զի զետն Աղատ¹ դստման բաժնիցն երկոցունց ընդ մէջ հատանէր»: Սրա կապակցությամբ միանգամայն հասկանալի է, թե ինչու Մովսես Բ. Նովարդցի կաթողիկոսը, որ Դվինումն էր նստած, ըստ IX դ. վրաց պատմիչ Արսեն կաթողիկոս Սավարացու, հրաժարվում էր Կ. Պոլիս գնալուց և Բյուզանդական կայսեր դեսպաններին պատասխանում էր. «Ձեմ անցնի Աղատ գետն, որ է սահման Պարսից, չեմ ուտի հունաց թըխվածքը և չեմ խմի նրանց թերմոնը»² (Լ. Մելիքսեբ-Բեկ—Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. I, Երևան, 1934, էջ 43): Ընդ սմին, Մուրիկ կայսեր օրոք գրված մի վավերագրում՝ «Ձեռնարկ միաբանութեան աշխարհիս Հայոց այնորիկ որ էին ընդ իշխանութեամբ Հոռոմոց», ի միջի այլոց, հիշված է «Յունանէս [Վանից երէց] Աւանի» (Գրք թղթոց, էջ 151):

Ավանում մեր ընդօրինակած արձանագրությունը, անշուշտ, հիշյալ դեպքերի ժամանակակից պիտի լինի: Այն փորագրված է խաչածե կաթողիկեի (երբեմն կաթողիկոսական աթոռանիստի) հյուսիսային մուտքի ձախ և աջ կողմը.

¹ Այժմյան Գառնի-շալը: Լ. Մ.-Բ.

² Այսինքն՝ տաք ջրախառն զինի: Լ. Մ.-Բ.

... Յ ԵՍ ՍԵ ... | ... ՍԱ ...

այսինքն՝ «(կամաւքն ա)յ ես, Սե ... սա ...»¹

2. Մաստարա: Խաչաձև կաթողիկեի հյուսիսային պատի վրա 997 թ. արձանագրության կից կա երկտող գլխատառ հռենարեն մի արձանագրություն, որ Արեւ Միսիթարյանի սխալ ընթերցմամբ հայտնի է եղել Դ. Ալիշանին, որ կասկածով է վերաբերվում վերջինիս, երբ գրում է. «Են ի ստորոտ արձանիս յունական տառք ինչ, եթէ ստոյգ ընթերցան ի դադափարողէն, զի անիմաստ են» («Այբարատ», էջ 136):

Ահա այս արձանագրությունն ըստ Դ. Ալիշանի, և մեր ընթերցմամբ.

ΠΘΡΛΛ (sic) ΠΕΡΟΣ
ONTAK (sic) [L]EONTAS

այսինքն՝ «Պերոզ, Լեոնաս» (անուններ են)²:

3. Ադիամա: Խաչաձև կաթողիկեի արևմտյան պատի լուսամուտի ձախ և աջ կողմը, մուտքի գլխին կա երկու մոնոգրամ (լիդասուրա).

ՍԱՐ | ԴԵՍ

այսինքն՝ «Սարգէս» (անուն է):

4. Օձուն-Ուզունլար: Գմբեթավոր բաղնիքի կապի երկու տարբեր պատերի վրա կարդացվում են հետևյալ անունները.

ա. Հարավային մուտքի գլխին՝ 956 թ. արձանագրության կից՝

ՅՈՎՄԱՍ

բ. Արևելյան պատի լուսամուտի բարձրության գծով՝

ԿՈԶՄԱՍ

գ. Նույն պատի վրա, ցածում՝

ՍՈ[]Բ[]ՂՈՐՍԵՍ

դ. Նույն պատի վրա, ավելի ցած՝

ԹԵՒՈՂՈ[Ր]Ո[Ս]

այսինքն՝ «Թովմաս, Կողմաս, Սո[.]բ[.]ղորմէս, Թեոդորոս» (անուններ են):

Սրանցից երկրորդը՝ Կողմասը՝ հավանական է նույն «Կողմաս Ուրդայ»-ն լինի, որ հիշատակված է Մորիկ կայսեր ժամանակվա վերոհիշյալ վավերագրում (Իիրք թղթոց, 151), եթե, իհարկե, ճիշտ է մեր փորձը հիշյալ «Ուրդ»-ն Օձուն-Ուզունլարի մոտ գտնվող «Արղուի» գյուղի հետ նույնացնելու ուղղությամբ³:

¹ Օգտվելով առիթից, ուղղում ենք նույն Ավանի 1285 թ. արձանագրության ընթերցումը (ըստ Հովհ. Շահխաթունյանի, Դ. Ալիշանի և Կ. Կոստանյանի) սկզբնական մասում. «ի թուխ 217. յաշխարհալուծիան արքայից արքային «Արղու Նին» (և ոչ «Արղու Նին») հարցական նշանի տակ. տես՝ Կ. Կոստանյանի, «Վիմական տարեգիր», 127):

² Ի դեպ՝ նշենք, որ Մաստարան 1010 և 1015 թ. թ. արձանագրությունների մեջ կոչվում է «Մասգարա», «Մազգարա» և ոչ «Մասարա»:

³ Օգտվելով առիթից, այստեղ ևս պիտի նշենք, որ իրավացի չեն մեր բանասերները, երբ Օձուն-Ուզունլարի եկեղեցին «Պաշտունդ» են կոչում. մինչդեռ վերջինս անձնանուն է, որով հայտնի է 1216 թ. խաչքարի արձանագրության մեջ հիշվող քահանան («Նա Խաչգունդ քահանայ, որ կանգնեցի զնշանս» ևլն):

Л. Меликсет-Бек

Из надписей Армении VII века*(Резюме)*

Открытие в Аване армянской и армяно-греческой надписей VI—VII вв. дает нам основание опубликовать ряд армянских и одну греческую надпись или, вернее, фрагментов таковых, содержащих в себе лишь упоминание лиц или отдельных слов, — которые были списаны нами в поездку по Армении в 1924 г. по крайней мере в 4-х пунктах (Аван, Мастара, Адиаман, Одзун-Узунлар). Из них греческая — в Мастаре, армянские же в других местах.